

Սակայն 47 թիւ անկողնէն տկար ձայն մը լսուեցաւ, — Մայրիկ... ու կրկնեց հառաչանքով մը. — Մայրիկ...:

Կիներ դարձաւ, մօտեցաւ անկողնոյն.

— Սալվադորէ՛, — մըմնջեց:

Հոգեվարքին մէկ ձեռքը բարձրացաւ ու շոյեց մազերը:

— Սալվադորէ՛, զաւակս ... — Կիներ ծոնցաւ այն ղողղոջուն ձեռքին տակ, ու շրթունքները դրաւ անծանօթին ճակատին վրայ:

Հոն քնաց ծունկի վրայ, բոլորովին անզգայ, յուսահատ:

Դուրսը զօրաւոր հով մը փչէր, ու ծառերը, վշտալից հոգիներու խուճիկ մը նըման, կը հեծէին:

ՃՈՒԶԷՓՓԷ ՖԱՆԶՈՒԼԼԻ

ՄԱՀԱՊՀԱՐԱԴԱ

ԵՐԳ Ա.

ԳԻՐԲ ՍԿՋԱՆՅՑ

կամ

ԾԱԳՈՒՄՆ (ԱՏԻ-ԲԱՐՎԱ)

75-135

Պատմիչը յիշատակեց մի առ մի ուրիշ շատ նախահայրեր Մահապարադայի դիւցազանց մինչև որ կարգն հասաւ յիշելու թէ ինչպէս զերազանց ճգնաւորն վեհասա, վիչիզրավիրեայ թագաւորին, իւր խորթ եղբոր մահուանէն վերջ, որ առանց զաւկի մեռած էր, ըստ տագրութեան օրինաց՝ պէտք էր սերունդներ տալ անոր այրիներուն, Ամպիքայի եւ Ամպալիքայի:

Երկար եւ խիստ ճգնութիւնները եւ ա-

նապատակեաց կենցաղը վեհասայի դէմքն ահարկու ըրած էին և դժնէստեսիլ. այնպէս որ երբ Ամպիքա տեսաւ անոր մօտեանալը, սարսափէն աչքերը փակեց. և իրենց միութենէն ծնաւ կոյր զաւակ մը որ յետոյ եղաւ Տրդարաշղրա թագաւորը: Իսկ երբ վեհասա մօտեցաւ Ամպալիքայի, սա չփակեց աչքերը, բայց մօզունեցաւ և իրենց միութենէն ծնաւ զաւակը կոչուեցաւ Բանտա, այս ինքն է «զուճատ»։ Այս երկու զաւակները խնամուեցան ու դաստիարակուեցան իրենց Պհիսմա մօրեղբոր ձեռքով որ քաջ և իմաստուն մարտիկ մ'էր: Տրդարաշղրա ամուսնացաւ Կանտհարի իշխանուհւոյն հետ և անկէ ունեցաւ հարիւր որդիք և մէկ դուստր. առաջինն իր զաւակաց եղաւ Տուրեռտհանա, հօգոն ու յանդուգը, բայց միանգամայն խորագէտն ու չարը, ինչպէս բուն և անգութ էր իր եղբայրը Տուհասասնա: Բանտու երկու կիներ ունեցաւ, Քունդի (որ Բրդհա եւ կ'անուանուի) և Մաղրի. սակայն այս երկուքէն ալ իրեն ժառանգ մը չէր ծնաներ, պատանկութեան ժամանակ պրահմանէ մ'ընդունած անէծքին պատճառաւ: Իրեն և իւր երկու ամուսիններու աղօթքներն և ուխտերը վերջապէս գորովեցին աստուածները որ խորհրդական հարսնիքի միջոցաւ շնորհին իրեն ցանկալի զաւակը: Այս կերպով երեք որդիք ունեցաւ Քունդի. Եուտիշթրա, Տհարմա՝ արդարութեան աստուծմէն: Պհիսմա, վայու՝ մըրիկներու աստուծմէն. Արհունա, ինտրա՝ միջնորոտի աստուծմէն:

Մաղրիէն ծնան Ասվինները, լուսաւոր աստուածութիւնները և երկու երկուորեակներ, Նաքուլա և Սահատհա: Իրենց հայրազրին անունով այս հինգ զաւակները Բանտուիւրը կոչուեցան, մինչքեւ Քուրուիտ կը կոչուէին ընդհանրապէս իրենց մօրաքեւ զաւակները, իբրեւ սերունդք Քուրուի, բաց աստի թէ՛ առաջինները և թէ՛ յետինքս հաւատարապէս կ'անուանուէին նաև Պհարա (ուսկից ծագեցաւ դիւցազնեղբորութեան անունը) իրենց նախահայր Պհարադայի անուամբ, որ Տուչեանդայի և Սա-

1. Լաւ համարեցանք այսպէս տագրութեան օրէնք թարգմանել levitat մովսիսական օրէնքը, որով հղբայր մը պարտաւորաւ է իւր անգաւակ մեռած եղբոր կնոջ հետ ամուսնանալ և զաւակ յարուցանել մեռելոյն անուանը շարունակելու համար:

ընդհատված ռդդին էր: Հինգ Բանտուիտ-ներու երկցագոյնը, Եւստիշթիւս, նշանաւոր էր իմաստութեամբ, արդարութեամբ և պարկեշտութեամբ. Պիճմա ունէր սարսափելի ոյժ, բուռն էր, յանդուգն, զայրացկոտ և կ'անուանէին զինքը վերքոտարա (զայլափոր) իր ամենակեր որկրաւ մոլորեան համար: Սակայն ամենէն աւելի ազնուական յատկութիւնք և ընտրելագոյն զինուորական առաքինութիւնք ամփոփուած էին Արճունայի մէջ. դիւցազնաբար քաջարի, մեծանմն, ասպետաբարոյ և զօրեմ: Հուսկ Նաքուրլան և Սահառեւան ամենագեղեցիկ և յանդուգն մարտիկներ էին, առանց իրենց միւս եղբայրներուն արտակարգ յատկութիւններն ունենալու: — Իրենց հօրը, Բանտուի, վաղաժաման մահուանէն վերջ (որուն խարոյկին վրայ նաև հաւատարիմն Մադրի ուզեց զոհել ինքզինքը), Բանտուիտները Գունդիով միասին առանձնացան Հաստինարուայի մէջ, մայրաքաղաքն ուր կը թագաւորէր իրենց հօրեղբայրն, կոյր թագաւորն Տրդարաշղըս: Հոն անան իրենց ու մեծցան իրենց հօրեղբորորդուց Գուրուիտներու հետ, դաստիարակուելով ամէն տեսակ գիտութեանց և զինուորական մարզանաց մէջ Տրոնա ամենավարժ պրահմանին ձեռքով:

Սակայն նախանձը կը տանջէր Գուրուիտներու հոգին, տեսնելով Բանտուիտներու գերազանցութիւնը. և իրենց չարակրութիւնը աւելի սաստկացաւ երբ, մեծ ասպետական մրցութեան մը մէջ՝ զոր հրաւայած էր Տրոնա իւր աշակերտաց յառաջադիմութիւնը ցուցնելու համար, Արճունայ յաղթեց ամենուն ալ զհաշարժութեան մէջ և անխտոր նետերով ամենադժուարին նպատակները հարուածելուն մէջ:

Արդ երբ ասպետական մրցութիւնը աւարտելու մերձ էր և հանդիսատեսը յողնած էին, և կը դադրէր արուեստական գործիներու հնչումը, դրան կողմէն լսուեցաւ բազումներու թեւերու ձայն մը, զօրաւոր դիւցաղի մը բազումներու, ձայն մը նման որոտման աղմուկներու: «Միթէ լոնե՞րը կը

խորտակուին իրարու բաղխելով, միթէ երկիրը կը պատռուի, միթէ երկինքը կը լեցուին որոտնդոտ ամպերով», այսպէս կ'ըսէին ամէնքն ասպարիզին մէջ, և ամէն հանդիսատեսը աչքերնին կը դարձունէին դէպի մեծ դուռը:

136-137

Երբ ամբողջ, հիացումէն աչքերը փռուեցած, վերջապէս տեղի տուաւ, ընդարձակ ասպարիզին մէջ մտաւ Քառնա, յաղթական մարտիկը, զգեցած իւր անմարմին զրահով, դէմքը իւր աւանշաց զինդերէն լուսաւորուած, ազեղը ձեռքին մէջ և սուրը՝ կողին, նա նման էր լեռան մը որ քայլէ:

111. Ո՛վ էր Քառնա՝ երբ որ Քունդի, Բանտուիտներու մայրը, դեռ օրիորդ աղջիկ մ'էր, իրեն խոնարհութեան և հուզածութեան համար գրաւած էր Տուրվասա ամենախիստ ճգնաւորին սիրտը և ստացաւ անկէ նուէր մը, Մանդրա մը, տուն մը մոգական յուսկութեան, որուն զօրութեամբ ինքը կարող պիտի ըլլար զաւակ մ'ունենալու այն աստուծմէ որ ինքը հաճէր կոչել: Միամիտ աղջիկը, հետաքրքրութեամբ փորձել ուզելով Մանդրային զօրութիւնը՝ արտասանեց զայն դէպի Արեւակը դառնալով իսկոյն աստուածն եւ ընթաւ իրեն ըովանդակ շքեղութեամբ: Օրիորդը մնալով հանդերձ անմեղ և անարատ, ծնաւ որդի մը, դիւցազուն զաւակ մը, որ ծնաւ իրեն մարմնոյն յարած զրահով մը, ճաճանչագեղ զինդերով աւանշներուն վրայ, օժտուած աստուածային գեղեցկութեամբ մը և բաղդաւորութեան ամէն նշաններով: Սակայն աղջիկն, աշխարհիս մեղադրութիւններէ վախնալով, շատ կակուղ և ամենագեղեցիկ բարձր մը լեցուած կողով մը պատրաստելէ վերջ, աշուր մէջ գետեղեց իր մանուկն արտասուելով, և թողուց զայն Ասվանատի գետին հոսանքին:

[III. 308, 9-27]

Լսեղէք հիմայ այն խօսքերը զորս
A.R.A.R. @

արտասանեց Քունդի արտասուազին ելոք Սլավնատի գետոյն ալեաց վրայ թողուց կողովը. «Հայտ ըլլան քեզ հետ, ով մանկիկ, աստուածութիւնքն օդոյ և երկնից և ջուրերու, երջանիկ ըլլայ քու ճանապարհորդութիւնդ, և ոչ մի չարակամ չպատահի քեզ: Զքեզ պէտք մէջ պաշտպանէ վարուճա, ջուրերու արքայն ու տէրը: զքեզ պաշտպանէ Քամին որ երկնից մէջ կը բնակի և ամէն կողմ կը շարժի, և միշտ պաշտպանէ զքեզ քու հայրդ, գերազոյն լուսաճաճանչ ջերմութիւնը, որ զքեզ, ով որդեակ իմ, շնորհեց ինձ աստուածային ճակատագրով մը... և զքեզ պահպանեն աստուածներն ամբողջ, թէ ուրախութեան մէջ և թէ ցաւոց մէջ, Նաև օտար աշխարհի մէջ, ես պիտի ճաննամ միշտ զքեզ քու բնածին զրահէդ: Երջանիկ է, ով որդեակ, քու ծնողդ, լուսաճաճանչ Արեգակը, որ իր աստուածային աչքովը պիտի գիտէ զքեզ երբ գետին հոսանքն ի վար պիտի ընթանաս: Երջանիկ է այն կէնը որ զքեզ իբրեւ զաւակ պիտի որդեգրէ, որուն լանջաց վրայ պիտի ըմպես երբ ի ծարաւոյ պապքիս, ով աստուածային մանուկ, կարելի՛ է որ նա զմայլած երազի մէջ ըլլալ չթուի երբ իւր գրկաց մէջ պիտի բառնայ զքեզ իբրեւ որդի, զքեզ՝ որ շողջողուն ես արեւո նման, զինուած աստուածային զրահովդ, պճնուած հրաշագեղ գինդերով, զքեզ՝ որ լոտոսներու նման երկայն և մեծ աչքեր ունիս, գեղեցիկ ճակատ մը, և հիանալի մազեր: Երանի անոնց որ պիտի կարենան տեսնել զքեզ երբ իբրեւ պատանեակ գետնի վրայ պիտի թաւալիս՝ փոշոյ մէջ թաթախուած, երանի անոնց որ պիտի լսեն քեզ երբ արտասանես անորոշ և գողտրիկ խօսքեր: Եւ երանի՛ դարձեալ անոնց որ յետոյ պիտի տեսնեն զքեզ կայտառ երիտասարդ մ'ուռճացած, նման բաշեղ զանգրահեր առիւծի որ Հիմա-

լայայի անտառներուն մէջ մեծցած է», Յետ այսպէս երկար և գորովազին արտասուելու, արքայական ալիկը թողուց կողովը Սլավնատի ալեաց մէջ... Սլավնատիէն անցաւ այն կողովը Չարմանկազի գետակին մէջ, Չարմանկազիէն Եամունայի, Եամունայէն Գանգէսի մէջ: Եւ Գանգէսի ալիքը տարին այդ կողովը փոքրիկ մանուկով մինչև ի քաղաքն Չամբայ, Սուտաներու աշխարհին մէջ:

Հոն Ատիրադա, Տրգարաշղրա Թագաւորին կառապանը, զտաւ և առաւ մանկիկը, իւր կնոջ Ռատնայի հետ միասին: Որովհետեւ իրենք զաւակ չունէին, մեծ ուրախութեամբ խնամեցին ու զաստիարակեցին այն տղան որ յետոյ եղաւ մեծ դիւցազն Քառնա Քառնա ուրեմն իւր Քունդի մօրը կողմանէ, խորթ եղբայր մ'էր Բանտուիտներու: Սակայն Քունդի ոչ մէկու իմացուցած էր անոր ծննդեան զաղտնիքը, ուստի և ամէնքը կը համարէին զինքն իբրեւ Ատիրադա կառապանին զաւակը: Այսպիսի մէկն էր այն դիւցազն, որ այն դիւցազանց ժողովոյն մէջ մտաւ, ասպետական մրցութեանց աւարտելու պահուն:

Նա զօրաւոր և քայլի իբրեւ ամենազօրաւոր առիւծ մը, ցուլ մը կամ փիղ մը, արեւու նման շողջողուն, լուսնոյ հանգոյն սիրելի, բոցի պէս վառվռուն. բարձր ոսկեսաղարթ արմաւենւոյ պէս, զօրաւոր իբրեւ առիւծ, անհամար առաքինութեամբ օժտուած էր այն հուշակաւոր որդին աւրեգական: Դիւցազն, նայելով շուրջ ամէն կողմ՝ ասպարիղին մէջ, թեթեւ կերպով խոնարհեցաւ Տրոնան և Քրքա երկու դաստիարակներու առջև: Եւ բովանդակ ամբոխը որ հոն համախումբուած էր, կը կենար առանց բիբերը թարթելու, լի հետաքրքրութեամբ և սազնապաժ, մտածելով թէ «Ո՛վ արդեօք կրնայ ըլլալ դա»: Եւ նա, զաւակն արեգական, խորին ձայնով մը, ամպերու մոնչելուն նման, ըսաւ ինդրայի որդւոյն, իւր անձանթի եղ-

բօր. «Ո՛վ իրդհայի զաւակ, ամէն ինչ որ դու գործեցիր քաջութիւնդ ցուցնելու համար, ես ալ պիտի գործեմ ամենուն առջեւ. մի հպարտանար այնքան»: Դեռ իւր խօսքը չէր աւարտած, մինչ ամէնքն ամէն կողմերէ ոտք ելան, իբրեւ ծածուկ զսպանակէ մը մղուած. և ուրախութիւնը թափանցեց Տուրետոհանայի սրտին մէջ, իսկ Արճունայի սիրտը լեցուեցաւ աւսթով և կատաղութեամբ: Այն աւտեն, երբ Տրոնա նշանը տուաւ, Քառնա, կռիւներու մտերիմը, մի և նոյն զարմանալիքը գործեց զէնքերով, ինչ որ առաջ գործած էր Արճունա: Ուստի Տուրետոհանա իրեն եղբայրներովն ի միասին ուրախութեամբ գրկելով և համբուրելով զՔառնա, այսպէս ըստանոր. «Ողջոյն քեզ, բարի ըլլայ գալուստդ, ո՞վ դիւցազն. բաղդն առաջնորդեց զքեզ հոս: Այն քու տրամադրութեանդ ենք ես և Քուրուխնեւրու թաղաւորութիւնն ամբողջ, ըրէ՛ ինչ որ կը հաճիս»:

Ըստ Քառնա. «Ես կը համարիմ որ ամէն ինչ ընդունած եմ արդէն քու բարեկամութեամբդ. սակայն կը փափաքիմ, ո՞վ թաղաւոր, Արճունային հետ առանձին մըցում մ'ունենայ», Տուրետոհանա պատասխանեց. «Վաշելէ ինձ հետ կեանքը, բարեբարդ բարեկամաց. իսկ բոլոր քու թշնամեացդ վրին վրայ դիր ոտքդ, ո՞վ յաղթականդ»: — Այն ատեն Արճունա, այսու նախատուած զգալով ինք զինքը, դարձաւ առ Քառնա որ լերան պէս կանգնած էր Քուրուխ եղբարց միջեւ, և ըստանոր. «Ո՛վ Քառնա, պիտի մեռնիս իմ ձեռքովս և պիտի երթաս հոն ուր կ'երթայ նա որ կ'ընթանայ առանց հրաւիրուելու, և նա որ կը խօսի առանց մէկն իրմէ բան մ'ուզելու»: Քառնա պատասխանեց. «Այս սապարէզը բաց և ամենուն համար. միթէ քաջարի թաղաւորները քու հրամանիդ կը կարօտին. հոս ոյժն

է օրէնսդիւրը, ինչ կը զօրեն բարանջաք, տկարներու զէնքը: Նետերով խօսէ, ո՞վ Պհարադա, մինչեւ որ նետերով խոցեմ քու գլուխդ քու վարժապետիդ առջեւ»:

Այն ատեն Տրոնային հրամանաւ, Արճունա, յաղթական մենամարտիկը, անապարանօք գրկելով իր եղբայրները, յառաջ մատեաւ կռուելու համար, մինչդեռ Քառնա, համբոյր մը փոխանակելով գիրկընդխառն Տուրետոհանայի հետ և անոր եղբայրներուն հետ, իրեն դիմացը կանգնեցաւ աղեղն ու նետերը ճօճելով:

Ակումբին մէջ ալ հոգիները բաժանուած էին. ոմանք կը փափաքէին յաղթական տեսնել զԱրճունա, Բանտուխ զաւակը, իսկ ուրիշներ՝ դիւցազն Քառնան. Սակայն Քուրուխի սիրտը կը տազնապէր ու կը դուրսդար տեսնելով իւր երկու որդիքը որ առանց զիրար ճանչնալու իրարու դիմաց կանգնած էին տաժանելի մենամարտի մը համար: Սակայն չէր համարձակեր նա բառ մ'արտասանել:

Մինչդեռ այն երկուքը զօրաւոր աղեղները կը բարձրացնէին, դաստիարակն Քրբա, մենամարտի օրէնքներուն հմուտ և իրաւանց գիտակ, այսպէս խօսեցաւ. «Սա է իրդհայի փոքրիկ որդին, զաւակ սերած ի Բանտուէ, Քուրուխի սերունդ. նա պիտի կռուի քեզի հետ առանձին մենամարտով: Յայտնէ՛ ուրեմն, դու ես, ո՞վ քաջարիդ, յայտնէ քու մօրդ, հօրդ, ընտանեացդ անունը. ո՞ր իշխանաց ցեղին պարզն ես դու. զայս գիտնալէն վերջ սա քեզի հետ պիտի չափուի, կամ ոչ. որովհետեւ իշխանները սովորութիւն չունին մարտնչելու անարդ սերունդէ ծնած մարդկանց հետ»:

Այսպիսի խօսքեր լսելով Քառնայի երեսը, որ ամօթոյ կարմրութեամբ խոնարհած էր, երեցաւ իբրեւ լոռոս մը որ անձրեւի ծանրութեան տակ կը հակի: Սակայն Տուրետոհանա ըստաւ. «Ո՛վ դաստիարակ, սրբազան մա-

տեանները կը սահմանեն որ երեք տեսակ է թագաւորներու դասակարգը. թագաւոր է նա որ արքայական սեւրունդէ կը ծնանի. թագաւոր է նա որ քաջարի է, թագաւոր է նա որ բանակի մը կ'առաջնորդէ. Սակայն ի՞նչ է Արճունա կը մերժէ մենամարտիլ անձի մը հետ որ թագաւոր չէ, շատ լաւ, ահաւասիկ ես կու տամ այս մարդուն Անկայի իշխանութիւնը, և զինքը կ'օծեմ վեհապետ Անկայի», եւ մի և նոյն վայրկեանին իսկ Քառնայի, զօրաւոր մարտիկին, որ ոսկէ-գրուազ աթոռի վրայ բազմած էր, Մանդրաներու մէջ վարժ պրահմաններու ձեռքով տրուեցաւ արքայական աստիճանը. և օծուեցաւ թագաւոր Անկայի, ցորենահատի, ծաղկանց, աւետեմներու և ոսկեայ խորհրդանշաններով, մինչդեռ հովանոցը կը պարզուէր իւր գլխուն վերեւ, եւ քի պոչերէ հովահարները կը ծածանէին և կեցեցեներու աղաղակները կը հնչէին:

— Այսպէս խօսեցաւ այն ատեն այն ամենագորաւորը առ զաւակն Քուրուի. «Ի՞նչ կրնամ ես տալ քեզի, որ կարենայ համեմատուիլ այս թագաւորութեան մը նուէրին. բւէ ինձ, ով վագրդ թագաւորաց, և ես պիտի կատարեմ զայն», — «Ես միայն քու բարեկամութեանդ կը ցանկամ մեծապէս» պատասխանեց անոր Տուրեհուհանա:

Քառնա հաւանեցաւ, և մեծ ուրախութեամբ ու ցնծութեամբ գրկախառն համբուրեցին զիրար:

Այս միջոցին ասպարիդին մէջ մտաւ Ստիրադա կառապանը, վերարկուն ի կախ, յոգնութենէն գողդոյուն, քրտնայից, և դաւազանին վրայ յենով. Զինքը հազիւ թէ տեսաւ Քառնա, թողուց աղեղն, ու որդիական յարգութեամբ մղուած անոր առջեւ խոնարհեցուց իր գլուխը, նուիրական ջուրով դեռ թաց. եւ կառապանը, առապարանք վերարկուին քղանցով ոտ-

քերը ծածկելով, յուզուած գրկեց ըզ-Քառնա, այլ ևս բոլորովին երջանիկ. կոչեց զնա գլորովայից «զաւակ իմ» և նորէն օծեց իւր արտասուօք անոր գլուխը որ արդէն նուիրական ջուրով օծուած էր թագաւորութեան հանգիստին համար. — Այն ատեն զաւակն Բանտուի Պհիմա, նայելով իւրեն՝ երգիծական ժպիտով մ'ըսաւ. «Արժանի չես որ Բրգհայի որդին մենամարտի մէջ մեռցունէ զքեզ, ով կառապանի մը զաւակ, առ ձեռքդ փութով խարազանը, քու ցեղիդ պատշաճաւոր զէնքը. Դու արժանի չես վայելելու Անկայի իշխանութիւնը, ով ամենավատ մարդ, ինչպէս որ արժանի չէ յուն մը վայելելու այն սրբազան նուէրները որ բազնին քով կը դրուին»:

Այս խօսքերուն վրայ Քառնայի շըրթունքը դողացին մի քիչ, և հառաչանքով մը նայեցաւ երկինք, գէպ ի արեգակը:

138-187

Այսպէս վերջացաւ ասպետական մըրցութիւնը, որ Քառնայի սրտին մէջ անշիջանելի վրէժխնդրութիւն դրոշմեց ընդդէմ Բանտուիտներու և խոր ատելութիւն մ'ընդդէմ Արճունայի. Այս ատելութիւնը հաւասարապէս կը զգար նաեւ Տուրեհուհանայ, որուն բնական դաշնակիցն եղաւ այս կերպով Քառնա. եւ Տուրեհուհանայի և անոր եղբայրներուն չարակամութիւնն իւրենց հօրեղբոր որդւոց հակառակ այնչափ սաստկացաւ որ ձերունի թագաւորն Տրգհարա ըռնադատուեցաւ այս վերջիններէ զրկել իւր մայրաքաղաքէն հեռու, ի վարանավաղա:

Սակայն հոս ալ կը հալածէր զանոնք Տուրեհուհանայի ատելութիւնը, որ իր հաւատարիմ պաշտօնէի մը ձեռքով, շինել տուաւ անոնց համար տուն մը՝ բոլոր փայտէ, կիզանելի հեղուկով մ'օծուած, որպէս զի զայն հրդեհէ զիջել ատեն և

այսպէս զամէնքն ալ ի միասին մեռցունէ։ Բայց իմաստունն Վիտորա Բանտուիտենբրուն իմացուց անագորոյն դաւաճանութիւնը. և ասոնք՝ տան մէջ թողլով հասարակ ցեղէ կի՛ն մը իրեն հինգ զաւակներով, իրենք գետնափոր փապուղիով մը փախան, և անտառներու մէջ ապաստանեցան։ Այս ժամանակամիջոցին մէջ այրեցաւ փայտէ տնակը. ոսմիկ կնոջ և անոր հինգ զաւակաց ոսկրները համարուեցան Գունդիի և Բանտուիտենբրուն դիակները, և Տուրետոհանա ուրախացաւ կարծելով որ իւր ատելի ախոյեաններէն ազատած է։

Շատ տագնապներ և բազմադիմի տառապանք կը քաշէին անմարդի անտառներու մէջ Բանտուիտենբրուն այս միջոցին. շատ վտանգներէ զերծան Պի՛մայի ահաւոր ուժին և Արճունայի քաջութեան շնորհիւ։ Հիտիմպա և Վաքա, երկու մարդակեր հակներ, սարսափ ճանապարհորդներու և բոլոր շրջակայ գաւառներու (մասնաւոր վերջինը, որուն պարտական էին ամէն օր արդկային էակ մը զոհել) սպառնուեցան Պի՛մայի ձեռքով մին միւսէն վերջ. և սա անոնց միոյն քոյրը հարսն առաւ իրեն, գեղանի Հիտիմպան, և անկէ որդի մ'ունեցաւ՝ Կադդաքաչան, որ յետոյ ինքն ալ հաւասարապէս քաջ պատերազմիկ մ'եղաւ։ Արճունա պատերազմի մէջ յաղթեց Չիդարադա Կառտհարվային, և անոր բարեկամն եղաւ։ Բանտուիտենբրունկէ իմացան որ Տրուբատա, Բանչալաներու թագաւորը, Սվայեամվարա մը հրատարակած էր, այս ինքն է համարմունք թիւն մը իշխաններու և պատերազմիկներու, որոնց մէջէն իւր դուտորն, ամենագեղանի Տրաւբատի, պիտի ընտրէր իրեն համար փեսայ մը։

Հինգ եղբայրները պրահմանի հագուստներով ձգտած Տրուբատայի արքունիքն հասան և խառնուեցան հոն հաւաքուած կարող և բազմաթիւ իշխաններու մէջ։ Տրդդատիւմա, հարսին եղբայրը, հանդիսապէս հրատարակեց թէ նա որ կարենայ թագաւորին ամենամեծ և ամենածանր առդեղը լարել և անով հինգ նետեր ուղղել

դէպ ի բարձր և շարժուն նպատակ մը, իրրե վարձք պիտի ստանայ իշխանուհոյն աջը։ Մին միւսէն վերջ մրցումը փորձեցին այն քաջ պատերազմիկները, սակայն ի զուր, և ոչ իսկ կրնային աղեղը ճկել և ծունկի կու գային սապարէզին մէջ հանդիսատեսներու ծաղրաբանութեանց ներքեւ։ Միայն Քառնա, անհամեմատելի աղեղնաւորն ու նետածիգը, լարեց աղեղն և զինեց զայն հինգ նետերով. սակայն իսկոյն վեր թողոց զայն, սաստիկ մահացած, որովհետեւ Տրաւբատի հպարտ ձայնով մ'արտասանած էր այս բառերը. « Կառապան մը չեմ ընդունիր ինձ փեսայ»։ Ի զուր փորձեցին մրցումը նաև Սիսուբալա, Չետերու թագաւորը, ի զուր Ճարասանտհա Մակատհայինը, ի զուր վերջապէս Սայեա, Մատրայի թագաւորը, թէպէտ և այնքան ճարտար ու փորձ ալ էր գինուց մէջ։

188-199

Այն ինչ թագաւորներն հրաժարեցան աղեղի և նետերու մրցումէն, պրահմաններու մէջէն ոտք ելաւ Արճունա, արիասիրտն, Աղադակեցին բոլոր հուշակաւոր քահանաներն, իրենց սատուրնի մուշտակները ծածանելով, երբ տեսան որ Բրդհայի որդին կը յառաջէ, ճառագայթարձակ ինչպէս ծիրանի գօտին։ Ոմանք յուսակտուրք, այլք՝ ընդհակառակն ուրախութեամբ լի. ոմանք փորձառունքեյն և իմաստուններն, այսպէս կը խօսակցէին իրարու մէջ. « Ինչպէս կարելի է, ո՞վ պրահմաններ, որ տկար և անփորձ նորընծայ մը կարենայ զինել աղեղը, զոր չկրցան ճկելու յաջողի այնքան հզօր պատերազմիկներ, վետաներու մէջ քաջափորձք, աշխարհի մէջ հռչակաւորք, ինչպէս Քառնա և Սայեա։ Պրահմաններն իշխաններու երգիծանաց առարկայ պիտի դառնան եթէ այս գործը, որուն այնքան լծելու լծեամբ կը ձեռնարկուի, չկարենայ կատարուիլ։ Եթէ սա աղեղին մրցու-

մը փորձելու կը ձեռնարկէ մյուսած յանձնապատասխանութեան, ընչաքաղց փառասիրութեան, կամ՝ թեթեամտութեան զգացմամբ, թող արգիլուի. այլ եւս յառաջ չերթայ»։ Բայց ուրիշ պրահմաններ կ'ըսէին. «Թագաւորնեւրը պիտի չկարենան ծաղրածել զմեզ, և ոչ ալ մէկը թեթեամտութեան աւատ պիտի ձգէ մեր վրայ, և ոչ ալ ատելութեան առարկայ պիտի ըլլանք ժողովրդոց»։

Լիւսի յուսով կրնանք ակնկալել այս ձեռնարկին յաջողութիւնն այս վեհազն պատանիէն, նման գուռոյ փղի մը պատիճին, յոյր ուսերով, հաստաբազուկ, լայնասրուն, հաստատուն և անխախտ Հիմարայայի նման, առիւծի նման քայլերով ընթացող, արբեցած փղի նման զօրաւոր. յաջողութիւնը կրնանք ըստպասել իւր արիական յանդգնութեանէն։ Սա զօրաւոր է և քաջասիրտ. ապա թէ ոչ ինքն իր կողմանէ չէր շարժեր։ Եւ չկայ բան մը աշխարհիս վրայ զոր պրահման մը չկարենայ կատարել, ըլլայ աստուածներու, ըլլայ աստանաններու, ըլլայ մարդկանց մէջ։ Թող անանին իրենք պարզ չուրով, զուտ օգուով, միայն պտուղներով, հաստատուն իրենց ուխտերուն մէջ. որքան ալ տկար և նուաղկոտ ըլլան, միշտ ամենազօրաւոր են պրահմաններն, որովհետեւ ճգնութիւնք իրենց կու տան անհամեմատելի զօրութիւն մը։ Այսպէս բոլոր պատերազմիկներն յաղթահարուեցան Ռամայէն, Ճամատակնիի զաւակէն. այսպէս իւր սըրբազան զօրութեամբն Ակաադիա պրահմանը լափեց ամբողջ անյատակ ծովը։ Կրնանք տարակուսիլ ուրեմն դուք ամէնքնիդ որ այս երիտասարդ պրահմանը չկարենայ բարձրացնել աղեղն ու զինել զայն»։ — «Այո, այո»։ պատասխանեցին այն գերազայն անձնք. և մինչդեռ անոնք այսպէս կը խօսէին, Արճուռն հասաւ աղեղին քով և կեցաւ հին, անխախտ՝ լեռան մը պէս, յե-

տոյ շուրջ բոլորը վառնալով յարգանք, ծռելով իւր գլուխը, յօգնութիւն կոչեց բարեսէր Սիւլան և աստուածայինն Քրիշնան, յետոյ ձեռքն առաւ աղեղը. և այն աղեղը զոր ի հեծուկս ամէն ջանքի չէին յաջողած զինել իշխանք և նշանաւոր նետաձիգ աղեղաւորը, ինչպէս Ռուքմա, Սունիդա, վագրա, Ռատհայի որդին, Տուրետահանա, Սալեա, Սալվա, մէկ ակնթարթի մէջ ճկեցաւ Արճուռնային, ինտրայի հպարտ ու զօրաւոր որդւոյն, ձեռքին մէջ, որ լարեց զայն ու զինեց հինգ նետերով. նետերը հարուածեցին նպատակը, որ սպառհար ինկաւ ի գետին. օգը թնդաց և բարձր աղաղակ մը բարձրացաւ ակումբին մէջէն։ Աքանչելի ծաղիկներ տեղացին Բրդհայի որդւոյն գլխուն վրայ, յաղթական դիւցազին վրայ. հազարաւոր պրահմաններ ծածանեցին իրենց վերարկուները, մինչդեռ լքման և յուսակտուր ձայներ կը լսուէին վհատած իշխաններու մէջ։

Տրաւրատի, զեղանի և ազնուական օրորը, ուրախութեամբ զնաց իսկոյն իւր փեսային ետէն, որ զինքն ստացած էր իր բազուկին զօրութեամբ. աակայն մեծ աղմուկ և յուզումն ելաւ Թագաւորներու և իշխանաց մէջ որ կ'ուզէին արգելել այս հարսանիքը։ Արճուռն յիրաւի պրահման մը կարծուած էր իրենցմէ, և թագաւորի մ'աղչկը, տոհմային օրինաց համաձայն չէր կրնար մարտիկներէ զատ ուրիշի մը հարսնանալ։ Աղմուկը կտուի փոխուեցաւ և Բանտուրիներուն դէմ խուժեցին դառնացած պատերազմիկները. սակայն Քրիշնա, որուն աստուածային աչաց առջև չկայ ինչ մը Թաքուն, հինգ պրահմաններու մէջ հինգ Բանտուրի զաւակները ճանչնալով, անոնց թշնամիները խաղաղեցուց և անփնա մեկնիլ տուաւ անոնց Տրաւրատիի, Արճուռնայի հարսին հետ ի միասին։ Դիմեցին անոնք իրենց ճանապարհարար, և անոր սեմը կոխելէն առաջ գոչեցին իրենց մօրը, ինչպէս որ սո-

վոր էին ընել ամէն օր երբ մուրալէ կը վերադառնային. «Այսօր ալ նուէր մը ըստացանք»: Քունդի, առանց դուրս ելնելու անոնց ընդ առաջ, և կարծելով որ սովորական ուտելեաց ողորմութեան համար է անոնց ըսածը, պատասխանեց. «Վայլ լեցէք զայն ամէնքնիդ ի միասին»: Սակայն երբ տեսաւ որ հինգ եղբայրները կը մտնեն իրենց հետ բերելով Տրաւքատին, և հասկցաւ թէ ինչպիսի նուէր մ'էր անոնց ակնարկածը, սարսափահար մնաց: Արհունա, նախ քան զամէնքը, թէպէտ և ինքն իր բազկին զօրութեամբ ստացած էր Տրաւքատին, չուզեց արատաւորել ինքզինքը, ամենածանր համարուած մեղքով մը, մայրենի խօսքին անհնազանդութեամբ, և այնպէս սահմանուեցաւ որ Տրաւքատի, Բանտուիտ հինգ եղբայրներու կինը պիտի ըլլայ: Երբ Տրաւքատա Թագաւորն իմացաւ որ պրահմաններու զգեստներու մէջ ծրպտուած էին հինգ դիւցազուն Բանտուի զաւակները, շատ ուրախացաւ. միայն չուրախացաւ այնքան՝ երբ իմացաւ որ իւր դուստրը հինգ դիւցազներուն ալ ամուսինը պիտի ըլլայ: Երբ Տրաւքատայի առջև եկաւ Երուտիղիրա իւր եղբայրներով, Տրաւքատին և Քունդի մայրն ալ ի միասին, և այսպէս խօսեցաւ.

«Ո՛վ արքայ, Տրաւքատի մեր ամենուս ամուսինը պիտի ըլլայ, որովհետեւ այսպէս հրամայեց մեր մայրը: Ես դեռ ամուսնացած չեմ, և ոչ ալ Պհլիմա. Բրդհայի որդին ստացաւ այս թանկագին գոհարը, քու դուստրդ: Արդ մենք դաշինք մ'ունինք բաժնելու մէջերնիս ամէն թանկագին իր, և այս դաշանց դէմ չենք ուզեր երբէք պակսիլ, ո՞վ վնասաւոր արքայ: Քրջնա մեր ամենուս օրինաւոր ամուսինը պիտի ըլլայ. նուէրական կրակին դիմաց թող նա մի առ մի մեր ամենուս ձեռքն առնու»: Տրաւքատա պատասխանեց. «Ո՛վ Քուրուի զաւակ, սահմանուած է որ մարդ մը շատ կիներ ունենայ, սակայն երբէք լուծած չէ որ կին մը պարտաւորեալ ըլլայ շատ ամուսիններ

ունենալ: Ո՛վ զաւակ Քունդիի, դու որ արդար և բարեպաշտ մարդ ես, պէտք չէ որ գործես բան մը հակառակ սովորութեանց և վետայի, ինչպէս կարելի է որ այսպիսի բան մը մտածես»: — Երուտիղիրա պատասխանեց...

Այնու հանդերձ Տրաւքատա Թագաւորը դեռ կը վարանէր, երբ վրայ հասաւ իմաստունն վեհաս զինքը համոզելու համար. սա առանձին մէկ կողմ տանելով Թագաւորը, մանրամասն և երկար բացատրեց իրեն որ հինգ Բանտուիտ եղբայրները ինտրա աստուծոյն հինգ զանազան մարմնացումներն էին, և իսկապէս չորս Բուրվենտրա (== ներկայէս յառաջագոյն) ինտրաներու, և նոյն ինքն Սաքրայի թէ ինքն իսկ Տրաւքատի մարմնացում մ'էր լաքշմի աստուածուհւոյն: Տրաւքատի իւր մէկ նախորդ էութեան ժամանակ, երբ իւրբեւ ճգնաւորի մը դուստրը ծնած էր, Սիվա աստուծոյն պաղատեցաւ որ իրեն փեսայ մը շնորհէ, և որովհետեւ հինգ անգամ կրկնած էր այս խօսքը «փեսայ մը շնորհէ ինձ», յաջորդ էութեան մէջ ծնաւ վերստին իբրեւ Տրաւքատա Թագաւորին դուստրը և ստացաւ իբրեւ փեսայնեւ հինգ Բանտուիտ եղբայրները: — վեհասայն այսպիսի խօսքերէն համոզուելով, Տրաւքատա հաւանեցաւ իւր աղջկան հարսանեաց. սովորութեան համաձայն կատարուեցան հարսանեաց արարողութիւնը, և գեղանին Տրաւքատի իւր պնագարդ զգեստուն մէջ զարդարուած, ձեռքերն իրարու միացնելով, խոնարհեցաւ Քունդիին առջև:

Յարկնսեհ զարդերով պնուած նուէր, գեղանի և պարկեշտաբարոյ Տրաւքատիին, ուղղեց Քունդի սիրալիւր կերպով խօսքն և այս օրհնութիւնը. «Ինչպէս որ է Սալի ինտրայի համար, ինչպէս որ է Սիվահա վիպահովասուի համար, և ինչպէս որ է Ռահինի Սոմայի համար և Տամայանդի Նալայի համար, ինչպէս Պհաստրա վայսրավանայի համար և Արունտադի

վազիշխման համար, ինչպես որ է
լաքլի վիշնուի համար, այսպես ալ
եղիր դու քու ամուսիններուդ համար,
մայր երկարակեցաց և դիցազուն զա-
ւակներու, բազմաթիւ գոհարներով
զուարթացած, երջանիկ, հարուստ,
բարեպարիշտ և հաւատարիմ ամուսին-
տարիներդ անցնին միշտ կանոնաց
համաձայն ընդունելու և պատուախ-
րելու մէջ հիւրերը, ճգնաւորները,
ծերունիները, տղաքը, վարժապետ-
ները. և Քուրուճանկայայի թագաւո-
րութեան ու մայրաքաղաքին մէջ Եւ-
տիշիրա իշխանն զբեզ պսակէ առա-
քինազարդ թագուհի, Եւ այն հա-
րուստ զանձները, որոնք թաքուն են
երկրիս մէջ, դու, ով ճոխացեալ ա-
ռաքինութեամբ, ստացիր զանոնք և
ապրէ երջանկաբար հարիւր աշուն-
ներ. և ինչպես ես այսօր կը ցնծամ
ուրախութեամբ տեսնելով զքեզ հարսն
մետաքսէ զգեստներու մէջ, այսպէս
դուն ալ կարենաս նորէն ուրախանալ
տեսնելով զքեզ առաքինազարդ մայր
մը սիրելի գաւակներու»:

ՔՕՕ-Ք12

Այս լուրը, որ Բանտուխները ազա-
տելով այն կրակէն, զոր հրդեհելով Տու-
րեոտհանա ջանացած էր մեռցնել զիրենք,
նոր և մեծագոյն կարողութիւն ստացած
էին իրենց Տրաքատիի հետ ամուսնու-
թեան և Տրուքատա թագաւորին հետ
զաշնադրութեամբ, մեծ յուզումն յառաջ
բերաւ իրենց նախանձուրդ հօրեղորորդուց
արքունեաց մէջ, Քառնա կ'ուզէր որ
Տրուքատայի դէմ պատերազմ հրատարա-
կուի, սակայն յաղթանակեցին Պհիշմայի
և Գրոնայի խաղաղական խորհուրդները.
և յուզարկուեցաւ Վիտուրա իբրեւ ղեկապան
Բանտուխներուն քով, որպէս զի հրաւի-
րէ զանոնք դառնալ հայրենիք, թագաւո-
րութիւնը երկու մասի բաժնուեցաւ. Քու-
րուիտ եղբայրները պահեցին իրենց Հաս-
դինարուրա մայրաքաղաքը, և Բանտուխ-

ները հաստատուեցան Խնտրաքատայի մէջ
(այժմեան Տէլհիի քով), Եամուկայի ա-
փանց վրայ. հինգ եղբայրց անդրանիկը,
իմաստունն Եուտիշիրա, օծուեցաւ թա-
գաւոր նոր պետութեան:

Ք13-Ք34

Հինգ եղբայրները պայմանադրած էին
չմանել բնաւ Տրաքատիի սենեակը մինչ
հոն կը գտնուէր իրենցմէ մին. Օր մը սա-
կայն Արճունա բռնադատուած ըլլալով զենք
մ'առնուլ պրահմանի մը վրայ յարձակող
աւագակները հալածելու համար, մտաւ
հոն մինչդեռ Եուտիշիրա ներսն էր: Եղ-
բայրը թէպէտ ներքեց իսկոյն այս զանցա-
ռութեան, որուն պատճառը կրօնական բա-
րեպաշտութեան զգացում մ'էր, այնու
հանդերձ Արճունա ուզեց զայն քաւել, և
առանձնացաւ տասուերկու տարի անտառ-
ներու միայնութեան մէջ կամաւոր աքսո-
րանաց: Երկար է և շատ զանազանուած
իրեն հոն ունեցած պատահարներու պատ-
մութիւնը: Այս ժամանակիս մէջ կանտա-
րուած ամէնէն աւելի վեհ և մեծագոյն
ձեռնարկն, զոր զիցազն Արճունա գոր-
ծեց Քրշնայի օգնութեամբ, եղաւ այն ձե-
ռքնտուութիւնը օգնելու համար Ակնիի,
(կրակին), որպէս զի կարենայ իսնտա-
վայի անտառն սպառել: Երկար տարիներէ
ի վեր կրակը նուաղած էր, տո՞գոյն ու
տկարացած. փափաքելով մեծ ճարակ մը
գտնել, շատ անգամներ փորձած էր լա-
փլէջ սպառել բոլոր մէջի կենդանիներով
իսնտալը ընդարձակածաւալ անտառը,
ուր սովոր էր ընակիլ Դադաքա, օձերու
թագաւորը: Սակայն ինտրա, տիեզերաց
հաստատութեան աստուածը, Չուրի և ան-
ձրեւներու յորդահոսան զօրաւոր տարափ-
ներով միշտ մարած էր հրդեհը:

Այս անգամ սակայն կրակը խնդրեց և
ստացաւ Արճունայի և Քրշնայի օգնու-
թիւնը: Հողմէն շատ աւելի երազատող
երկու կառքերու վրայ հեծած, մին կան-
տիվա (աղեղը զոր Սոմա տուաւ վարու-
նայի, վարունա կրակին, կրակն ալ Ար-

ճունայի) սքանչելի աղեղով գինուած, միւսն ալ ասորսփեղի սկաւառակով (Սաքրա), բոցարծարծ հրդեհին մէջ կը մղէին բոլոր կենդանի էակները, որ փախչիլ կը ջանային, ապահովելով այսու Աշխի համար հսկայական կերակուր մը: Ինտրային տեղացած հեղեղորէն անձրեւներու տարափին դէմ, յաղթեց Արճունայի արձակած նետերու տարափը. և ամբողջ աստուածներու յարձակման դէմ յաղթական հանդիսացաւ Քրջնայի սկաւառակը: Այսպէս ամենակուլն Աշխի լափեց և սպառեց ամբողջ խանտավայի անտառը. սակայն Դաքըջը, որ ի սկզբան Գուրուքընդայի մէջ ապաստանեցաւ, և անոր որդին՝ Ասվասնա, ազատեցան: Կրակը խնայեց սուրբ Մանտարալայի որդւոց, չորս փոքր անփետուր թռչնիկներու, զոհանալով այն զովասանական երգէն որ այս ձագունները երգեցին ի պատիւ իրեն: Իսկ Արճունա հրդեհէն ազատեց մեծ արուեստաւոր Մայան, որ իրմէ զթուփին պաղատած էր:

Թարգմ. Հ. Յ. ԱՒԳԻՐ

Շարունակելի

— Ոչ միշտ իրաւունք ունի նա որ լաւ կը տրամաբանէ:

Ա. ԿՐԱՅ

Քաղաքակրթութիւնը կեղե մ'է, որուն ներքե կրնայ վառուիլ, բովանդակ իւր գծոխային հուրին զօրութեամբ, մարդու վայրենի կիրքը:

Թ. ԳԱՌԱՅԻ

Միայն քաղաքակրթ ժողովրդեան մը պատերազմական զօրութիւնը կրնայ աշխարհիս վերայ խաղաղութիւնն ապահովել:

Թ. ՌՈՒԶՈՒՆԷԼԻ

Անոնք են մեծ մարդիկ որոնք կը տեսնեն թէ բարոյական ուժը նիւթական որիւէ ուժէ աւելի զօրաւոր է, և թէ զաղափարներով կը կառավարուի աշխարհ:

Ռ. Վ. ԷՄԷՐՍՆ

digitised by

ՈՐԴԻՆ ՀՕՐԸ ԲԱՆՏԱՊԱՆ

ԹԱՏԵՐԱԽԱՂ

ԵՐԵՔ ՀԱՆԴԵՍՆԵՐՈՎ

ԱՆՁԻՆՔ

ՀՈՒԹԱՐՏՈՍ ՔՈՒՄՊԼԷՊԻՐԻ, ԽԶԽԱՆ ՄԻՒՂԱՍԻ
և ուրիշ Դոգմակներուն

ԳԱՐԻԻԷԼ, ԽՐ ՈՐԴԻՆ
ԴԱԽԻԹ ՓՈԽՏԵՆԴԻՔՄԻ, ՖԵԼԵԳՈՒԼԵՄԻ ԴԶԿԵԼԵ
բանտերուն պահապան

ՀԵՆՐԻԿՈՍ ՏՈՒԼԷՑ, գնապետ
ԿՐԵԿՈՐ, հանրային այցելու Քլավէրաւզի տանտէ.
բուժեան

ԿՈՒՍՏԱՎ ՊՈԹՈՒԷԼ, բարեկամ Հոյքարտոսի
ԹՈՒՄ ՀՈՒԼԻՏԷՑ, բարեկամ Կրեկորի

ՅԱՎՈՒՔ ՀԻՈՊԻ, նաւավար
ՍԱՄՈՒԷԼ, { ԽՐ ԵՐԵՔ ՈՐԴԻՆ, — Սահակ Ին
ՍԱՀԱԿ, { տարուան

ԳԵՈՐԳ ԿԱՏՏԻ, Դաւթի ծառան

ՍՊԱՅԻՐ, Կրեկորի

ՍՊԱՅԻՐ, Կրեկորի

ՋԻՆՈՒՈՐՆԵՐ, } որոնք չեն խօսիր

ՋՕՐԱԿԱՆՆԵՐ, }
ԵԱՌԱՆԵՐ,

Տեսարանն է ի Սկովտիա, — Ժամանակն է Ժողովրդի:

ՀԱՆԴԵՍ ԱՌԱՋԻՆ

Գորակն սրա՞ն՝ մէրտեղը յացուած, կամ փակուած վանդակով մը միայն, ուստի կամառն եղնելով կը հասնուի խկոյն գետակի մը եզրը, որուն նստ հանդիպակողմը պէտք է դրայ գործակելի: Խիստ հետուն կը տեսնուի քանձրասխտ անտառ մը:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

Հագիւ չէ վարագոյրը կը քարձրանայ, կը շտաի քնարեօրենքոյ ըմբիւն, և հետուն կը տեսնուի ծխոյ գունտերը:

ԴԱՌԱՌ ՄԻԱՅՆ

Քայքայ վայ թշուառութեանս: Սատանի տան կրակ մըն է այս: Ժամ մըն է՝ և աւելի իսկ՝ որ այս գեղայարմար երաժշտութեամբս ականջ չիս թմբուկը կը ճախեցնեն: Եւ սակայն՝ զար-

A.R.A.R.®